



**«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ խորհրդի
«16» մայիսի 2019թ. թիվ 34 որոշմամբ
Փոփոխությունները և լրացումները
Խորհրդի «03» սեպտեմբերի 2021թ. թիվ 55 որոշմամբ

**ՑԱՄԱՔԱՅԻՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏՈՒՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ
ԳԱԶԱԲԱԼՈՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	3
ԲԱԺԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԼՔՄԱՆ ԿԱՐԳԸ.....	5
ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ	8
ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ	8
ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ	9
ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ԶՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ	12
ԲԱԺԻՆ 7. ԶՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ)	15
ԲԱԺԻՆ 8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԴՐԱ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ	15
ԲԱԺԻՆ 9. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ	16
ԲԱԺԻՆ 10. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	20
ԲԱԺԻՆ 11. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ԱՆՑՆԵԼԸ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻՍ).....	24
ԲԱԺԻՆ 12. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)	24
ԲԱԺԻՆ 13. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ.....	25

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Ցամաքային ավտոտրանսպորտում տեղադրված գազաբալոնի ապահովագրության սույն կանոնները, (**այսուհետև՝ Կանոններ**), մշակված են Հայաստանի Հանրապետության Օրենսդրության, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն:

1.2 Ցամաքային ավտոտրանսպորտում տեղադրված գազաբալոնի ապահովագրությունը ներառվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ոչ կյանքի Ապահովագրության տեսակի «*Ցամաքային տրանսպորտի (բացառությամբ երկաթուղային) ապահովագրություն*» դասի մեջ:

1.3 Կանոնները հանդիսանում են Ցամաքային ավտոտրանսպորտում տեղադրված գազաբալոնի Ապահովագրության պայմանագրի և/կամ վկայագրի (այսուհետև՝ Ապահովագրության պայմանագիր) անբաժանելի մասը: Ապահովագրության պայմանագիրը կարող է բովանդակել այլ պայմաններ, որոնք որոշվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ, չպետք է հակասեն Կանոններին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին:

1.4 Կանոններում նշված պայմանները կարող են փոփոխվել (բացառվել կամ լրացվել) Կողմերի գրավոր համաձայնությամբ՝ Ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ կամ դրա գործողության ընթացքում, պայմանով, որ նման փոփոխությունները չեն հակասում օրենսդրությանը և Կանոններին:

1.5 Կանոնների համաձայն «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետև՝ Ապահովագրող), գործելով օրենքի, իրավական ակտերի և իր կանոնադրության համաձայն, կնքում է Ցամաքային ավտոտրանսպորտում (այսուհետև՝ ԱՄ) տեղադրված գազաբալոնի Ապահովագրության պայմանագրեր ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ (այսուհետև՝ Ապահովադիր):

1.6 Ապահովադիր կարող է հանդիսանալ ավտոտրանսպորտի սեփականատեր հանդիսացող, կամ իրավական այլ հիմքով ավտոտրանսպորտի տիրապետման, տնօրինման, օգտագործման (շահագործման) իրավունք ունեցող իրավաբանական կամ ֆիզիկական անձը,

1.7 Ապահովադիրն իրավունք ունի Ապահովագրության պայմանագիր կնքել ինչպես իր օգտին, այնպես էլ իր օգուտ այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձի (այսուհետև՝ Շահառու), որն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հիմքերով ապահովագրված ավտոտրանսպորտի նկատմամբ ունի գույքային կամ անձնական շահ և համապատասխանաբար հանդիսանում է շահագրգիռ անձ այդ ավտոտրանսպորտի անվտանգության ապահովման, անվնաս պահպանման խնդրում:

Գրավադրված ավտոտրանսպորտային միջոցի ապահովագրության դեպքում Ապահովագրության պայմանագրում նշված գրավառու հանդիսացող Շահառուն իրավունք ունի ստանալու հատուցում՝ վճարման օրվա դրությամբ գրավով ապահովված պարտավորության գումարի սահմաններում: Հատուցման մնացած մասը վճարվում է Ապահովադիրին կամ այլ Շահառուին, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

1.8 Ապահովադիրը կարող է փոխարինել Ապահովագրության պայմանագրում նշված Շահառուին՝ միայն վերջինիս գրավոր համաձայնությամբ՝ այդ մասին առնվազն 15 օր առաջ ծանուցելով Ապահովագրողին: Ընդ որում, Շահառուն չի կարող փոխարինվել այլ անձով, եթե նա Ապահովագրության պայմանագրով կատարել է որևէ պարտականություն կամ Ապահովագրողին պահանջ է ներկայացրել Ապահովագրական հատուցում ստանալու համար: Ապահովագրական պատահարի տեղի ունենալուց հետո Շահառուի մահվան դեպքում Ապահովագրական հատուցումը տրվում է Շահառուի ժառանգներին՝ վերջիններիս կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ժառանգությունն ընդունելուց հետո:

1.9 Կանոններում կիրառվող անվանումներն ու հասկացությունները որոշ դեպքերում հատուկ պարզաբանվում են համապատասխան սահմանումներով: Եթե որևէ անվանման կամ հասկացության նշանակությունը պարզաբանված չէ Կանոններում և չի կարող պարզաբանվել օրենսդրական և ենթօրենսդրական նորմատիվ ակտերով, ապա նման անվանումը կամ հասկացությունը պարզաբանվում է տառացի և բառացի նշանակությամբ:

1.10 Կանոններում գործածվող հիմնական հասկացություններն են՝

1.10.1 *Ապահովագրող*՝ «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ,

1.10.2 *Ապահովադիր*՝ Ապահովագրողի հետ Ապահովագրության պայմանագրի կնքող անձ,

1.10.3 *Շահառու*՝ Ապահովագրության պայմանագրում նշված ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը համաձայն ՀՀ օրենսդրության, իրավական ակտերի կամ պայմանագրերի ունի ավտոտրանսպորտի պահպանման գույքային շահ և ունի ապահովագրական հատուցում ստանալու առաջնային իրավունք:

1.10.4 *Ապահովագրական արժեք*՝ ավտոտրանսպորտային միջոցի Ապահովագրության պայմանագրի կնքման պահին տվյալ գույքի իրական (շուկայական) արժեքը,

1.10.5 *Ապահովագրական գումար*՝ Ապահովագրության պայմանագրում սահմանված դրամական գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է կատարել ապահովագրական հատուցում ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում: Ապահովագրական գումարի չափը որոշվում է Ապահովագրողի և Ապահովադրի փոխադարձ համաձայնությամբ, սակայն այն չի կարող գերազանցել Ապահովագրության պայմանագրի կնքման պահին ապահովագրված օբյեկտի իրական (շուկայական) արժեքը և Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում նվազեցվում է յուրաքանչյուր հատուցման գումարի չափով:

1.10.6 *Ապահովագրավճար*՝ Ապահովագրավճարն Ապահովագրության պայմանագրով սահմանված չափով և պայմաններով Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումարն է,

1.10.7 *Ապահովագրավճարի հերթական մասի վճարում*՝ Ապահովագրավճարի տարածամկետ վճարում մասերով, որոնց չափերը և վճարման ժամկետները սահմանվում են Ապահովագրողի կողմից Ապահովագրության պայմանագրում:

1.10.8 *Ապահովագրական սակագին*՝ սահմանված ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափ,

1.10.9 *Չհատուցվող գումար (ֆրանշիզա)*՝ Ապահովադրի մասնակցության չափը վնասի հատուցմանը,

1.10.10 *Ապահովագրական հատուցում*՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովագրողի կողմից Ապահովագրության պայմանագրում նշված ապահովագրական գումարի սահմաններում Ապահովադրին (Շահառուին) վճարման ենթակա գումարն է՝ դրամական արտահայտությամբ կամ համարժեք գույքով կամ վնասված գույքի վերանորոգման միջոցով:

1.10.11 *Ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր*՝ անձ, որին սեփականության (տիրապետման, օգտագործման, տնօրինման) իրավունքով պատկանում է ավտոտրանսպորտային միջոցը,

1.10.12 *Լիազորված վարորդ*՝ անձ, որը նշված է Ապահովագրության պայմանագրի «Լիազորված վարորդ» դաշտում (եթե Ապահովադիրը ևս հանդիսանում է վարորդ, «Լիազորված վարորդ» դաշտում նշվում են Ապահովադրի տվյալները) և ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ ավտոտրանսպորտային միջոցը վարելու օրինական հիմք, համապատասխան կարգի վարորդական և առնվազն 6 ամսվա վարորդական փորձ, որի կողմից ապահովագրված ավտոտրանսպորտային միջոցը վարելու հետևանքով առաջացած պատահարները Կանոններով և Ապահովագրության պայմանագրով սահմանված պայմաններին համապատասխան հանդիսանում են Ապահովագրության պայմանագրի առարկա:

Ապահովագրության պայմանագրով կարող է սահմանվել անսահմանափակ թվով վարորդների հնարավորություն, որոնց կողմից ավտոտրանսպորտային միջոցը վարելու հետևանքով առաջացած պատահարները Կանոններով և Ապահովագրության պայմանագրով սահմանված պայմաններին համապատասխան հանդիսանում են Ապահովագրության պայմանագրի առարկա: Եթե Ապահովագրության պայմանագրում նշվում է անսահմանափակ թվով վարորդների հնարավորություն, ապա Լիազորված վարորդ է հանդիսանում 23 տարին լրացած ֆիզիկական անձն (այդ թվում նաև Ապահովադիրը), որն ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ ավտոտրանսպորտային միջոցը վարելու օրինական հիմք (ապահովագրված ԱՄ-ն վարելու իրավունքի լիազորագիր կամ ուղեգիր, համապատասխան կարգի վարորդական իրավունք) և առնվազն 6 ամսվա վարորդական փորձ, եթե Ապահովագրության Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Եթե ապահովագրական պատահար տեղի ունենալու պահին լիազորված վարորդը ունենում է 3 տարվանից քիչ վարորդական փորձ, ապա Ապահովագրության պայմանագրով սահմանված չհատուցվող գումարի չափը կրկնապատկվում է, իսկ չհատուցվող գումար նախատեսված չլինելու դեպքում՝ կիրառվում է չհատուցվող գումար՝ ապահովագրական գումարի 1% չափով, սակայն ոչ պակաս, քան 100 000 ՀՀ դրամը:

1.10.13 *Ավտոտրանսպորտային միջոց կամ ավտոտրանսպորտ (ավտոմոբիլ) (ԱՄ)*՝ մեխանիկական տրանսպորտային միջոց, որը նախատեսված է մարդ, բեռ կամ դրանց վրա տեղադրված սարքավորումներ ճանապարհով տեղափոխելու համար: “Ավտոտրանսպորտային միջոց” կամ “Ավտոտրանսպորտ” տերմինը տարածվում է նաև ցանկացած տիպի տրակտորների և ինքնագնաց մեքենաների վրա:

1.10.14 *Լրացուցիչ սարքավորում*՝ ավտոտրանսպորտային միջոցի գործարանային կոմպլեկցիայի մեջ չմտնող սարքավորում, այսինքն ավտոտրանսպորտային միջոցի արտադրողի կողմից ավտոտրանսպորտի արտադրության (հավաքման) ժամանակ չտեղադրված սարքավորում կամ կոմպլեկտ (օրինակ՝ աուդիո, վիդեո համակարգ, բարձրախոս, համակարգիչ, կապի միջոցներ, ոչ գործարանային ավտոձայնագրիչ, ոչ գործարանային անվախեծ և այլն):

1.10.15 *ավտոտրանսպորտային միջոցի և/կամ լրացուցիչ սարքավորման լրիվ կառուցվածքային ոչնչացում*՝ ավտոտրանսպորտային միջոցի և/կամ լրացուցիչ սարքավորման կոնստրուկտիվ ոչնչացումն է, երբ ավտոտրանսպորտային միջոցի և/կամ լրացուցիչ սարքավորման վերանորոգման, վերականգնման արժեքը (ներառյալ՝ Ապահովագրության պայմանագրով հատուցման ենթակա ծախսերը) գերազանցում է ավտոտրանսպորտային միջոցի իրական (ապահովագրական) արժեքի 80%-ը:

1.10.16 *Գազաբալոնային սարքավորումներ*՝ բալոնների և դրանց արմատուրայի (բալոնների խաչուկների, եռաբաշխիկների, փականների), միացնող խողովակների, գազատար խողովակամուղի և դրանց միացման հանգույցների, բարձր և ցածր ճնշման ռեդուկտորների, շարժիչի աշխատանքի կառավարման համակարգի, ստուգիչ-չափիչ և ապահովիչ սարքերի ամբողջությունը:

ԲԱԺԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Ապահովագրության պայմանագրով Ապահովագրողը պարտավորվում է սահմանված որոշակի գումարի (ապահովագրավճարի) դիմաց Կանոններով սահմանված և Ապահովագրության պայմանագրում նշված որոշակի ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովադիրին վճարել ապահովագրված ԱՄ-ի համար Ապահովագրության պայմանագրով սահմանված որոշակի գումարի (ապահովագրական գումարի) սահմաններում ապահովագրական հատուցում:

2.2 Ապահովագրության պայմանագրով ԱՄ-ն կարող է ապահովագրվել hoգուտ այն անձի (ապահովադրի կամ շահառուի), որը օրենքի, այլ իրավական ակտի կամ պայմանագրի հիման վրա այդ գույքի պահպանման շահ ունի: Ապահովադրի կամ շահառուի մոտ ապահովագրված գույքի պահպանման նկատմամբ շահագրգռվածության բացակայության դեպքում կնքված գույքի ապահովագրության պայմանագիրն անվավեր է:

2.3 Ապահովագրության պայմանագրի կնքման համար հիմք է հանդիսանում Ապահովադրի բանավոր հայտարարությունը կամ Ապահովագրողի պահանջով գրավոր դիմումը, եթե այդ տեղեկություններն անհրաժեշտ են Ապահովագրողին Ապահովագրության ընդունվող ռիսկի գնահատման նպատակով լրացուցիչ ուսումնասիրություններ իրականացնելու համար:

2.4 ԱՄ-ի Ապահովագրության պայմանագրի կնքման համար Ապահովադիրը պարտավոր է ներկայացնել՝

ա) ԱՄ-ի նկատմամբ սեփականության (տնօրինման, տիրապետման, օգտագործման) իրավունքը հաստատող փաստաթղթերը կամ դրանցում պարունակվող տվյալները,

բ) տեխնիկական անձնագիրը (պետական գրանցման վկայականը)՝ բացառությամբ Կանոնների 2.5 կետով նախատեսված դեպքերի, կամ դրանցում պարունակվող տվյալները,

գ) Ապահովագրողի աշխատակցի կողմից Ապահովագրության պայմանագրի կնքման օրվա դրությամբ կատարված լուսանկար և/կամ առկայության դեպքում ԱՄ-ի և ԼՄ-ի գնահատման հաշվետվության այն էջերի պատճենները, որոնք պարունակում են ԱՄ-ի գնահատված արժեքը և լուսանկարները:

դ) ԱՄ-ն վարելու թույլտվություն ունեցող անձի (անձանց) տվյալները (անձնագրային և վարորդական տվյալները)՝ եթե Ապահովագրության պայմանագրում նշվում է կոնկրետ լիազորված վարորդ,

ե) առկայության դեպքում՝ անկախ փորձագետի կողմից տրամադրված ավտոտրանսպորտային միջոցի արժեքի գնահատման եզրակացություն և լրացուցիչ սարքավորման արժեքը հաստատող փաստաթղթեր,

զ) այլ փաստաթղթեր կամ դրանց պատճենները կամ տվյալներ, եթե այդպիսիք կպահանջի Ապահովագրողը:

2.5 Ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել նաև մինչև ԱՄ-ի պետական գրանցման պահը, եթե չեն խախտվել ԱՄ-ի պետական գրանցման համար նախատեսված ժամկետները: Այս դեպքում Ապահովագրության պայմանագրում նշվում են ԱՄ-ի տեխնիկական տվյալները, իսկ Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրության պայմանագրում սահմանված ժամկետում ներկայացնել տվյալ ԱՄ-ի պետական գրանցման վկայականը (տեխնիկական անձնագիրը) կամ դրանց պատճենը: Եթե Ապահովագրության պայմանագրում սահմանված ժամկետներում Ապահովադիրն Ապահովագրողին չի ներկայացնում տվյալ ԱՄ-ի պետական գրանցման վկայականը (որը կարող է առաքվել փոստով կամ հավաստվել Ապահովագրողի կողմից փաստաթղթի ստացման համար պատասխանատու անձի համապատասխան նշումով կամ կարող է ստացվել Ապահովագրողի ֆաքսի համարով), ապա Ապահովագրողն ապահովագրական պատահարների համար Ապահովադրի (Շահառուի) նկատմամբ պատասխանատվություն չի կրում Ապահովագրության պայմանագրում տվյալ ԱՄ-ի պետական գրանցման վկայականի (տեխնիկական անձնագրի) ներկայացման համար սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող օրվա 00.00 ժամից մինչև այն ստանալու օրվա 23:59 ժամը: Ապահովագրողն Ապահովադրի (Շահառուի) նկատմամբ պատասխանատվություն չի կրում նաև այն ապահովագրական պատահարների համար, որոնք տեղի են ունեցել Ապահովագրության պայմանագրով սահմանված Ապահովադրի կողմից ԱՄ-ի պետական գրանցման վկայականի (տեխնիկական անձնագրի) կամ դրանց պատճենի Ապահովագրողին ներկայացման համար սահմանված ժամկետներում, սակայն ապահովագրական պատահար տեղի ունենալու պահի

դրությամբ Ապահովադիրը խախտել է ԱՄ-ի պետական գրանցման համար օրենսդրությամբ նախատեսված (թույլատրված) ժամկետները:

Սույն կետում սահմանված դեպքում Ապահովագրության պայմանագիր կարող է կնքվել, երբ Ապահովագրության պայմանագիր կնքող անձի սեփականության տիրապետման, տնօրինման կամ օգտագործման (շահագործման) իրավունքի ծագումը կամ պահպանության շահը տվյալ ԱՄ-ի նկատմամբ որևէ հիմքով երաշխավորված կամ հիմնավոր է:

2.6 Ապահովագրության պայմանագիրն Ապահովագրության իրականացման փաստը հավաստող փաստաթուղթ է, որը տրամադրվում է Ապահովադիրին՝ սահմանված ապահովագրավճարի մուծումից անմիջապես հետո, եթե ապահովագրավճարի վճարման այլ ժամկետ սահմանված չէ: Եթե Ապահովագրության պայմանագրով նախատեսված է ապահովագրավճարի տարածամկետ վճարման եղանակը (մեկից ավելի փուլերով վճարում), ապա Ապահովագրության պայմանագիրը ստորագրությամբ հանձնվում է Ապահովադիրին ապահովագրավճարի առաջին մասը վճարելու պահից: Եթե Ապահովագրության պայմանագրով սահմանված է ժամկետ, որի ընթացքում, տարածամկետ վճարման եղանակի առկայությամբ, պետք է կատարվի առաջին վճարումը, ապա Ապահովագրության պայմանագիրը ստորագրությամբ հանձնվում է Ապահովադիրին այն կնքելուց անմիջապես հետո:

2.7 Ապահովագրված ԱՄ-ն վաճառելու, նվիրելու ինչպես նաև գույքի բաժանման դեպքում Ապահովադիրն իրավունք ունի Կանոններով սահմանված կարգով տվյալ ավտոտրանսպորտի Ապահովագրության պայմանագիրը վերաձևակերպելու նոր սեփականատիրոջ անունով: Եթե Ապահովադիրն Ապահովագրության պայմանագիրը հանձնում է տվյալ ԱՄ-ի նոր սեփականատիրոջը, բացառությամբ Կանոնների 2.8 կետի, ապա Ապահովադիրը և ԱՄ-ի նոր սեփականատերը (իրավաբանական անձի դեպքում՝ նրա անունից հանդես գալու իրավունք ունեցող անձը) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով ԱՄ-ի սեփականատեր հանդիսանալու պահից հետո 7 օրյա ժամկետում պետք է ներկայանան Ապահովագրողին՝ Ապահովագրության պայմանագրում համապատասխան փոփոխություն կատարելու նպատակով: ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով ԱՄ-ի սեփականատեր հանդիսանալու պահից հետո 7 օրյա ժամկետում Ապահովագրողին չներկայանալու դեպքում Ապահովագրության պայմանագրով սահմանված Ապահովագրողի պարտավորությունները չեն գործում՝ մինչև Ապահովագրության պայմանագրում համապատասխան փոփոխություն կատարելու օրվա 23.59 ժամը: Մինչև սահմանված 7 օրյա ժամկետում Ապահովագրողին ներկայանալը Ապահովագրության պայմանագիրը գործում է առանց դրանում փոփոխություն կատարելու, իսկ նոր սեփականատերը ինքնաշխատ կերպով համարվում է ԱՄ-ի լիազորված վարորդ:

2.8 Ապահովագրված ԱՄ-ն ժառանգության իրավունքով այլ անձի սեփականությունը դառնալու դեպքում Ապահովագրության պայմանագրի գործողությունը շարունակվում է մինչև նշված ժամկետի ավարտն ի օգուտ ժառանգների, որտեղ որպես Ապահովադիր հանդես են գալիս Ապահովադրի գույքը (ԱՄ-ն) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ժառանգություն (սեփականության) ընդունած Ապահովադրի ժառանգները՝ Ապահովագրության պայմանագրում առանց փոփոխություն կատարելու:

2.9 Ապահովադրի մահվան դեպքում նրա իրավունքները և պարտականությունները փոխանցվում են երրորդ անձին (Շահառուին), եթե վերջինիս օգտին է կնքվել Ապահովագրության պայմանագիրը, իսկ եթե Ապահովագրության պայմանագրում Շահառու նախատեսված չէ, ապա Ապահովադրի իրավունքներն ու պարտականությունները անցնում են վերջինիս գույքը (ավտոտրանսպորտը) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ժառանգություն (սեփականության) ընդունած ժառանգներին:

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ

3.1 Կանոնների համաձայն Ապահովագրության օբյեկտ են համարվում ՀՀ օրենսդրությանը չհակասող Ապահովադրի ԱՄ-ի տիրապետման, շահագործման (օգտագործման) կամ տնօրինման հետ կապված գույքային շահերը, որոնք կապված են ԱՄ-ում տեղադրված գազաբալոնի պայթյունի հետևանքով ԱՄ-ի լրիվ կառուցվածքային ոչնչացման, կորստի կամ վնասման հետ:

3.2 Կանոններով Ապահովագրության ենթակա է՝

3.2.1 իրավական ակտերով սահմանված կարգով պետական գրանցում ստացած և տեխնիկական զննություն անցած ԱՄ-ն՝ բացառությամբ Կանոնների 2.5 կետով նախատեսված դեպքերի,

3.2.2 այն ԱՄ-ն, որին սահմանված կարգով տրված են “Տարանցիկ” (տրանզիտ) ռեզիստրացիոն նշաններ և դրանց գործողության ժամկետը Ապահովագրության պայմանագրի կնքման օրը չի լրացել,

3.2.3 Ապահովագրության ենթակա են միայն այն ԱՄ-ները, որոնց գազաբալոնային համակարգի տեղադրումն իրականացվել է համաձայն ՀՀ օրենսդրության համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպության կամ անհատի կողմից: Բացի այդ պարտադիր է ապահովագրության ենթակա ԱՄ-ի հողմապակու վրա փակցված ՀՀ կառավարության կողմից սահմանված նմուշի և ուժի մեջ գտնվող կտրոն:

3.2.4 Եթե Ապահովագրության պայմանագրով նախատեսված է, ԱՄ-ի ԼՄ-ները:

3.3 Ապահովագրման ենթակա չեն այն ԱՄ-ները՝

3.3.1 որոնց նկատմամբ պահպանված չեն մաքսային ձևակերպման կանոնները,

3.3.2 որոնք գրանցված են ինտերպոլի տվյալների բազայում, ինչի մասին տեխնիկական անձնագրում կատարված է համապատասխան գրառում:

3.4 Եթե Ապահովագրության պայմանագրի կնքման պահին ապահովագրման ենթակա ԱՄ-ն ունի վնասվածքներ, ապա Ապահովագրողն ապահովագրական պատահարի արդյունքում պատճառված վնասի չափը նվազեցնում է Ապահովագրության պայմանագրի կնքման պահին առկա վնասվածքի համապատասխան չափով: Եթե Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադիրը վերականգնում է ԱՄ-ի վնասվածքը, ապա նա պարտավորվում է վնասը վերականգնելուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում ԱՄ-ն ներկայացնել Ապահովագրողին՝ զննման, ինչի արդյունքում Ապահովագրողը պարտավոր է կազմել համապատասխան զննման ակտ:

3.5 Ապահովագրության տարածքն այն տարածքն է, որի սահմանների ներսում տեղի ունեցած ապահովագրական պատահարների համար Ապահովագրողը կրում է Կանոններով նախատեսված պատասխանատվություն: Եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա Կանոնների հիման վրա կնքված Ապահովագրության պայմանագրերում Ապահովագրության տարածք է համարվում բացառապես Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչական տարածքը:

ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

4.1. Կանոններով ապահովագրական պատահարներ են համարվում Ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետում տեղի ունեցած և Կանոնների համաձայն իրավասու պետական մարմինների կողմից տրված փաստաթղթերով կամ Ապահովագրողի կողմից հաստատված ԱՄ-ի (Ապահովագրության պայմանագրով նախատեսված լինելու դեպքում նաև ԼՄ-ի) և գազաբալոնային համակարգի ֆիզիկական վնասվելը կամ ոչնչացումը, որը տեղի է ունեցել տվյալ ԱՄ-ի գազաբալոնային սարքավորման պայթյունի հետևանքով:

4.2. Ռիսկի աստիճանի փոփոխություն՝

Ապահովագրության պայմանագրի կնքման պահին, ինչպես նաև դրա գործողության ընթացքում Ապահովադիրը պարտավոր է ստորև նշված հանգամանքների կամ դրանցում փոփոխությունների

մասին անհապաղ (իսկ 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում նաև գրավոր) հայտնել Ապահովագրողին՝

ա) ԱՄ-ի միջոցի օտարում, գրավադրում և/կամ տնօրինման և օգտագործման իրավունքի այլ սահմանափակում,

բ) Համարանշված մասերի փոփոխություն (թափք, շարժիչ, պետհամարանիշ և այլն),

գ) Լրացուցիչ սարքավորման տեղադրում, եթե Ապահովագրության պայմանագիրը նախատեսում է լրացուցիչ սարքավորումների ապահովագրություն,

դ) ԱՄ-ի բանալիների կամ գրանցման փաստաթղթերի կորուստ,

ե) այլ հանգամանքներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ ապահովագրական ռիսկի գնահատման վրա:

4.3. Ապահովագրական ռիսկի աստիճանի մեծացումն առաջացնող հանգամանքների մասին տեղեկացված Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու փոփոխել Ապահովագրության պայմանները կամ վճարել ռիսկի մեծանալուն համաչափ լրացուցիչ ապահովագրավճար:

4.4. Եթե Ապահովադիրը (Շահառուն) Կանոնների հիմքերով Ապահովագրողի՝ Ապահովագրության պայմանագրի պայմանները փոփոխելու կամ լրացուցիչ ապահովագրավճար վճարելու պահանջը մերժում է, ապա Ապահովագրողը կարող է Կանոնների համաձայն և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պահանջել Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ լուծում:

4.5. Եթե Ապահովադիրն ստացել է վնասների հատուցում երրորդ անձանցից (վնաս պատճառողից), Ապահովագրողը վճարում է Ապահովագրության պայմանագրի պայմաններով վճարման ենթակա գումարի և երրորդ անձանցից ստացված (վճարված) գումարի տարբերությունը, իսկ եթե Ապահովադիրն ստացել է վնասների հատուցումն ամբողջությամբ, ապա Ապահովագրողն ազատվում է ապահովագրական հատուցում վճարելու իր պարտականությունից:

4.6. Ապահովադիրը պարտավոր է անհապաղ հայտնել Ապահովագրողին երրորդ անձանցից վնասների հատուցում ստանալու մասին, իսկ հատուցումն ստանալու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողին հայտնել այդ մասին նաև գրավոր: Սույն կետի խախտման հետևանքով Ապահովագրողը ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց, իսկ դրա հետևանքով առաջացած բոլոր ռիսկերը կրում է Ապահովադիրը:

ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

5.1 Ապահովագրողը մերժում է ապահովագրական հատուցման վճարումը, եթե՝

ա) Ապահովադիրը չի կատարել Կանոններով սահմանված իր պարտականությունները,

բ) Ապահովադիրը կամ Լիազորված վարորդը պատահար տեղի ունենալու դեպքում 6 (վեց) ժամվա ընթացքում այդ մասին չի տեղեկացրել համապատասխան իրավասու մարմիններին (Ոստիկանությանը, ՃՈ մարմիններին, Հրշեջ ծառայությանը և այլն),

գ) Ապահովադիրը կամ Լիազորված վարորդը Կանոնների 10.2 կետի ժա) ենթակետով սահմանված կարգով և ժամկետներում տեղի ունեցած պատահարի մասին չի տեղեկացրել Ապահովագրողին,

դ) ապահովագրված ԱՄ-ն շահագործվել է Ապահովագրության պայմանագրում որպես Լիազորված վարորդ չնշված անձի կողմից կամ շահագործվել է Վարչական Իրավախախտումների Վերաբերյալ ՀՀ օրենքի 128 հոդվածի պահանջների խախտումով:

ե) Ապահովադիրը կամ Լիազորված վարորդը ԱՄ-ն վարելիս գտնվել է ակոհոլի (ակոհոլ պարունակող նյութերի), թմրանյութերի կամ տոքսիկ նյութերի ազդեցության ներքո և/կամ հրաժարվել է ակոհոլային զննում անցնելուց,

զ) ապահովագրված ԱՄ-ի վարորդը դիմել է փախուստի կամ ինքնակամ հեռացել է պատահարի վայրից և/կամ ԱՄ-ն պատահարի վայրից ինքնակամ տեղաշարժել է՝ առանց դրա անհրաժեշտության,

ե) պատահարն առաջացել է Ապահովադրի, Շահառուի կամ Լիազորված վարորդի, ապահովագրված ԱՄ-ի ուղևորների դիտավորյալ գործողությունների արդյունքում, որոնք ուղղված են եղել ապահովագրական պատահարի առաջացմանը կամ վերոհիշյալ անձանց կողմից հանցագործություն կամ հանցագործության փորձ կատարելու արդյունքում,

ը) պատահարը տեղի է ունեցել Ապահովագրության պայմանագրում նշված ապահովագրության տարածքից դուրս,

թ) ապահովագրված ԱՄ-ն օգտագործվել է մրցույթներում, փորձարկումներում, ուսումնական նկատառումներով, տրամադրվել է վարձակալության, օգտագործվել է ուղևորներ և/կամ բեռներ տեղափոխելու նպատակով որոշակի վճարի դիմաց՝ Ապահովագրողին ապահովագրական պայմանագիրը կնքելու պահին ապահովագրվող տրանսպորտային միջոցի օգտագործման այդպիսի նպատակի մասին գրավոր չտեղեկացնելով,

ժ) ԱՄ-ն բեռնավորվել, բեռնաթափվել կամ փոխադրվել է ցանկացած տեսակի փոխադրամիջոցով (բացառությամբ՝ ապահովագրված ԱՄ-ն ճանապարհային երթևեկության կանոնների պահպանմամբ քարշակելու դեպքի),

ժա) Ապահովադիրը կամ Լիազորված վարորդը սահմանված ժամկետում ԱՄ-ն չի ներկայացրել փորձաքննության և/կամ հնարավորություն չի ընձեռել Ապահովագրողին անցկացնելու փորձաքննություն և/կամ վնասված ԱՄ-ի վրա կատարել է կառուցվածքային փոփոխություններ (փոխել, վերանորոգել է վնասված հանգույցները և դետալները առանց Ապահովագրողի հետ համաձայնեցնելու),

ժբ) Ապահովադիրը կամ Լիազորված վարորդը չի ներկայացրել Ապահովագրողին անհրաժեշտ փաստաթղթերը՝ հատուցում կատարելու մասին որոշում կայացնելու համար կամ ներկայացրել է կեղծ փաստաթղթեր, որոնք հակասում են իր կողմից Ապահովագրողին ներկայացրած հայտային գրավոր դիմումին,

ժգ) Ապահովադիրը կամ Լիազորված վարորդն Ապահովագրողին կամ պատահարի հանգամանքները պարզող իրավասու մարմնին հայտնել է պատահարի իրական հանգամանքներին ակնհայտ չհամապատասխանող, անարժանահավատ կամ կեղծ տեղեկություններ և/կամ օգտագործել է կեղծ միջոցներ՝ ապահովագրական հատուցում ստանալու համար:

ժդ) ԱՄ-ն ապահովագրական պատահարից առաջ շահագործվել է անսարք վիճակում, ունեցել է թերություններ, որոնց պատճառով տեղի է ունեցել պատահարը,

ժե) պատահարը տեղի է ունեցել միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման ուղղակի կամ անուղղակի ազդեցության հետևանքով,

ժզ) պատահարը տեղի է ունեցել ռազմական գործողությունների, զորաշարժերի կամ այլ ռազմական միջոցառումների հետևանքով,

ժէ) պատահարը տեղի է ունեցել քաղաքացիական պատերազմի, ցանկացած տիպի ժողովրդական հուզումների, սահաբեկչական գործողությունների, գործադուլների հետևանքով,

ժը) պատահարը տեղի է ունեցել այն գոտիներում, որտեղ պաշտոնապես հայտարարված է արտակարգ իրավիճակ,

ժթ) պատահարը տեղի է ունեցել պետական մարմինների կարգադրությամբ ապահովագրված ԱՄ-ի առգրավման, բռնագրավման, ռեկվիզիցիայի, դրա վրա արգելանք դնելու, ոչնչացման կամ վնասման հետևանքով,

5.2 Համաձայն Կանոնների՝ չեն հատուցվում հետևյալի արդյունքում առաջացած վնասները՝

ա) ամոնիակի և թթվածնային գազաբալոնների օգտագործման արդյունքում պայթյունի հետևանքով պատճառված վնասը,

բ) ավտոմեքենաների վրա գազաբալոնների տեղադրման և շահագործման անվտանգությանն ուղղված ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանոնների խախտմամբ տեղադրված գազաբալոնների պայթյունի հետևանքով պատճառված վնասը,

գ) վերանորոգումից հետո ԱՄ-ի ապրանքային, շուկայական արժեքի կորուստ կամ նվազում,

դ) վնասը, որը պատճառվել է Ապահովադրի/վարորդի և/կամ ուղևորների գույքին, որը գտնվել է ԱՄ-ի մեջ ապահովագրական պատահարի տեղի ունենալու ժամանակ,

ե) ԱՄ-ի լրացուցիչ սարքավորման (ավտոռադիոմագնիտոլա և հարակից սարքավորումներ (մոնիտոր, աուդիո և վիդեո սարքավորումներ), ավտոհամակարգիչ, կապի միջոց, գազի բալոն կամ այլ օժանդակ սարքավորում) ֆիզիկական վնասը, եթե դրանց ապահովագրությունն առանձին նախատեսված չէ Ապահովագրության պայմանագրում,

զ) ԱՄ-ի այն դետալների, հանգույցների վերանորոգումը կամ նորով փոխարինումը, որոնք վնասված, ջարդված են եղել մինչև պատահարի տեղի ունենալը: Եթե պատահարի արդյունքում արդեն իսկ վնասված դետալները, հանգույցները էլ ավելի են վնասվել, Ապահովագրողը հատուցում է միայն դրանք մինչև ապահովագրական պատահար տեղի ունենալու վիճակին բերելու համար անհրաժեշտ ծախսերը,

է) կրակի հետ անգույշ վարվելու հետևանքով ապահովագրված ԱՄ-ի և ԱՄ-ի սրահի մասերի վնասում կրակի բաց օջախի, այդ թվում ծխելու հետևանքով,

ը) լիազորված վարորդի կողմից ճանապարհային երթևեկության կանոնների (ՃԵԿ-ի) և "Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին" ՀՀ օրենքի (ՃԵԱԱՄ-ի) պահանջներին հակասող ցանկացած գործողության արդյունքում ավտոտրանսպորտային միջոցը հանդիպակաց երթևեկության կողմում և վերջինիս սահմանակից տարածքներում (մայթ, թափառքի և արգելակման գոտիներ, կանգառի համար լայնացված տեղեր, ոչ երթևեկելի հատվածներ) հայտնվելու հետևանքով,

թ) ավտոտրանսպորտային միջոցը լուսացույցի արգելող ազդանշանի տակ մուտք գործելու հետևանքով,

ժ) հակահրդեհային անվտանգության և վտանգավոր իրերի և նյութերի պահպանման ու տեղափոխման կանոնների խախտման դեպքում,

ժա) գործարանային խոտան կամ նորոգման ժամանակ կատարված խոտան,

ժբ) ԱՄ-ի և ԼՄ-ի բնական մաշվածություն շահագործման արդյունքում,

ժգ) ՀՀ օրենսդրությամբ, նորմատիվ իրավական ակտերով սահմանված ավտոտրանսպորտի տեխնիկական շահագործման և անվտանգության պայմանների, կանոնների կամ կարգերի խախտման, որոնց մասին Ապահովադիրը (Ապահովադրի լիազորած անձը կամ լիազորված վարորդը) իմացել էր կամ պարտավոր էր իմանալ,

ժդ) վնասը, որն առաջացել է (հետևանք է) ԱՄ-ի շահագործման արդյունքում դետալների, հանգույցների կամ ագրեգատների կոտրվելու, փչանալու, շարքից դուրս գալու հետևանքով:

5.3 Ապահովագրողն ամեն դեպքում չի հատուցում`

ա) բարոյական վնասը, բաց թողնված օգուտը, պարապուրդը, եկամտի կորուստը, Ապահովադրի և Շահառուի այլ անուղղակի և առևտրային կորուստները, վնասները և ծախսերը, օրինակ` տուգանքներ, ապահովագրական պատահարի կարգավորման ընթացքում հյուրանոցում բնակվելը, գործուղման ծախսերը, հեռախոսային խոսակցությունները, ապրանքների մատակարարման և ծառայությունների տրամադրման ժամկետների խախտման հետ կապված կորուստները և այլն,

բ) բեռնատար, մարդատար ԱՄ-ների, կաբրիալետների, կցորդների և կիսակցորդների պարուսինաձածակին պատճառված վնասը:

գ) ոչ գործարանային պայմաններում վերաձևափոխված ԱՄ-ները զրկվում են ապահովագրական ծածկույթից` Հրդեհ" ռիսկի մասով:

ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ԶՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

6.1 Ապահովագրական գումարը սահմանվում է Ապահովագրության պայմանագրի կողմերի փոխադարձ համաձայնությամբ, բայց չի կարող գերազանցել դրա գտնվելու վայրում Ապահովագրության պայմանագրի կնքման օրվա դրությամբ ավտոտրանսպորտային միջոցի իրական (ապահովագրական կամ շուկայական) արժեքը: Ավտոտրանսպորտային միջոցի ապահովագրական արժեքը գերազանցող Ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի մասով Ապահովագրության պայմանագիրն առոչինչ է:

6.2 Ավտոտրանսպորտային միջոցի ապահովագրական արժեքը սահմանվում է Ապահովագրողի կողմից հետևյալի հիման վրա՝

ա) նոր ավտոտրանսպորտային միջոցի գնի՝ սահմանված պաշտոնական դիլերների կողմից՝ Ապահովագրության պայմանագրի կնքման օրվա դրությամբ,

բ) առևտրային կազմակերպության կողմից տրված հաշիվ-ապրանքագրի կամ ավտոտրանսպորտային միջոցի առք ու վաճառքի պայմանագրի (Ավտոտրանսպորտային միջոցի սկզբնական գնման դեպքում), ավտոտրանսպորտային միջոցի մաքսային փաստաթղթերի,

գ) Ապահովագրության պայմանագրի կնքման օրվա դրությամբ ապահովագրության պայմանագրի շուկայական արժեքի: Ապահովագրության պայմանագրի շուկայական արժեքը սահմանվում է մասնագիտացված հրատարակություններում տպագրված տվյալների հիման վրա,

դ) իրավասու կազմակերպության և/կամ մասնագետի կողմից գնահատված շուկայական արժեքի,

6.3 Ապահովագրության պայմանագիր կնքելիս Ապահովագրողն իրավունք ունի ուսումնասիրելու և զննելու ապահովագրության օբյեկտը:

6.4 Լրացուցիչ սարքավորման ապահովագրության դեպքում ապահովագրական արժեքը սահմանվում է լրացուցիչ սարքավորման և դրանց տեղադրման արժեքը հաստատող փաստաթղթերի (անդորրագրերի, հաշիվների և այլնի) հիման վրա: Նման փաստաթղթերի բացակայության դեպքում լրացուցիչ սարքավորման ապահովագրական արժեքը որոշվում է կողմերի համաձայնությամբ:

6.5 Կողմերի համաձայնությամբ ապահովագրական գումարը սահմանվում է ՀՀ դրամով, իսկ ոչ ռեզիդենտների համար կարող է սահմանվել ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով՝ Ապահովագրության պայմանագրի կնքման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ արտարժույթի համար հրապարակված փոխարժեքով:

6.6 Ավտոտրանսպորտային միջոցի ոչ լրիվ արժեքով ապահովագրություն Կողմերի համաձայնությամբ Ապահովագրության պայմանագրով կարող է նախատեսվել ապահովագրական գումար, որի մեծությունը պակաս է ապահովագրական արժեքից (ոչ լրիվ արժեքով ապահովագրություն): Այս դեպքում ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում ապահովագրական հատուցումը հաշվարկվում է ապահովագրական գումարի և ապահովագրական արժեքի հարաբերությանը համամասնորեն:

6.7 Եթե ավտոտրանսպորտային միջոցն ապահովագրվել է ոչ լրիվ արժեքով, Ապահովադիրը (Շահառուն) իրավունք ունի իրականացնելու լրացուցիչ ապահովագրություն մեկ այլ ապահովագրական ընկերության մոտ, սակայն բոլոր ապահովագրության պայմանագրերով ապահովագրական գումարները չպետք է գերազանցեն տվյալ ավտոտրանսպորտային միջոցի ապահովագրական արժեքը:

6.8 Ապահովագրական հատուցում իրականացնելուց հետո ապահովագրական գումարը ինքնաշխատ կերպով նվազեցվում է հատուցված գումարի չափով: Ապահովագրական գումարը համարվում է նվազեցված ապահովագրական հատուցում վճարելու մասին Ապահովագրողի եզրակացությունը կազմելու ամսաթվից: Ապահովագրական հատուցման գումարը ստանալուց հետո

Ապահովադիրն իրավունք ունի լրացուցիչ ապահովագրավճարի դիմաց վերականգնել նախնական ապահովագրական գումարի չափը: Նախնական ապահովագրական գումարի չափը չվերականգնելու դեպքում Ապահովագրական պայմանագրի գործողության ընթացքում հաջորդ հատուցման ժամանակ հաշվի է առնվում նվազեցված ապահովագրական գումարը:

6.9 Ապահովագրավճարի մեծությունը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից սահմանված ապահովագրական սակագնի հիման վրա: Ապահովագրական սակագինը որոշվում է Ապահովագրողի կողմից՝ էլնելով ապահովագրական գումարի չափից, Ապահովագրության ժամկետներից, ապահովագրական ռիսկերի Ապահովադրի կողմից ընտրված ծածկույթից, կարգավորիչ գործակիցներից, չհատուցվող գումարի մեծությունից և Ապահովագրության ընդունվող ռիսկի վրա ազդեցություն ունեցող այլ հանգամանքներից:

6.10 Մինչև մեկ տարի ժամկետով կնքվող Ապահովագրության պայմանագրի համար Ապահովագրողի կողմից տվյալ ռիսկի համար սահմանած տարեկան ապահովագրական սակագնի նկատմամբ կարող են կիրառվել Ընկերության կողմից սահմանված կարգավորիչ գործակիցներ:

6.11 Ապահովագրավճարներն Ապահովադրի կողմից կարող են վճարվել միանվագ՝ ամբողջ Ապահովագրության ժամկետի համար կամ մաս-մաս: Վճարման կարգը սահմանվում է Ապահովագրության պայմանագրով:

6.12 Ապահովագրավճարներն Ապահովադրի կողմից կարող են վճարվել կանխիկ կերպով Ապահովագրողի դրամարկղ կամ ներկայացուցչին (այդ թվում ապահովագրական գործակալին), իսկ անկանխիկ հաշվարկների դեպքում՝ Ապահովագրողի կամ ապահովագրական գործակալի համապատասխան հաշվարկային հաշվին:

6.13 Ապահովագրավճարի վճարման կարգը և ձևը որոշվում են Ապահովագրողի և Ապահովադրի փոխադարձ համաձայնությամբ և սահմանվում են Ապահովագրության պայմանագրով:

6.14 Ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարման ամսաթիվ է համարվում Ապահովագրողի դրամարկղ կամ Ապահովագրողի իրավասու ներկայացուցչին ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարման օրը կամ ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարման՝ Ապահովագրողի հաշվարկային հաշվին մուտք լինելու օրը:

6.15 ՀՀ դրամին համարժեք արտարժույթով ապահովագրության դեպքում ապահովագրավճարը (ապահովագրավճարի հերթական մասը) վճարվում է ՀՀ դրամով, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ՝ Ապահովագրության պայմանագրի կնքելու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքով:

6.16 Եթե մինչև Ապահովագրության Պայմանագրով սահմանված ժամկետի հաջորդ օրը հերթական (սկսած երկրորդից) ապահովագրավճարը չի վճարվել կամ վճարվել է Ապահովագրության Պայմանագրով նախատեսվածից փոքր չափով, ապա Պայմանագրով նախատեսված ապահովագրությունը չի տարածվի այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել Պայմանագրով, որպես վճարման վերջին օր նախատեսված օրվա 23.59 ժամից մինչև պարտավորության գումարի վճարման ամսաթվի 23.59 ժամը:

6.17 Եթե Ապահովագրության պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում Ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Ապահովագրության պայմանագիրը, եթե պայմանագրով նախատեսված չէ այլ ժամկետ կամ ապահովագրավճարի մուծման տարաժամկետման հնարավորություն:

6.18 Եթե Ապահովադիրն Ապահովագրության պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում չի վճարել հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետից երեք օր (լրացուցիչ ժամկետ) հետո

միակողմանի լուծելու Ապահովագրության պայմանագիրը՝ առանց այդ մասին Ապահովադրին ծանուցելու:

ԲԱԺԻՆ 7. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՉԻԶԱ)

7.1 Ապահովագրության պայմանագրում կողմերը կարող են սահմանել Ապահովադրի մասնակցության չափը վնասի հատուցմանը՝ չհատուցվող գումար (ֆրանչիզա):

7.2 Չհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական և սահմանվում է ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ կամ կարող է սահմանվել քաղաքական դրամական արտահայտությամբ:

7.3 Պայմանական չհատուցվող գումարի ժամանակ Ապահովագրողը չի վճարում ապահովագրական հատուցում, եթե ԱՄ-ին պատճառված վնասը չի գերազանցում չհատուցվող գումարի չափը, իսկ եթե վնասը գերազանցում է չհատուցվող գումարի չափը, ապա ապահովագրական հատուցումը վճարվում է վնասի ամբողջ ծավալով կամ չհատուցվող գումարը հավասարվում է 0-ի:

7.4 Ոչ պայմանական չհատուցվող գումարի ժամանակ ապահովագրական հատուցումը նվազեցվում է չհատուցվող գումարի չափով:

ԲԱԺԻՆ 8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ԴՐԱ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ

8.1 Ապահովագրության պայմանագիրը կնքվում է Ապահովագրողի և Ապահովադրի (այսուհետ՝ Կողմեր) համաձայնությամբ ցանկացած ժամկետով:

8.2 Այն ավտոտրանսպորտի համար, որին սահմանված կարգով տրված են “Տարանցիկ” (տրանզիտ) ռեգիստրացիոն նշաններ, որոնց գործողության ընթացքում ԱՄ-ն ենթակա չէ գրանցման Պետավտոտեսչությունում, Ապահովագրության պայմանագիրը կնքվում է մինչև “Տարանցիկ” (տրանզիտ) ռեգիստրացիոն նշանների գործողության ժամկետի ավարտի օրը:

Եթե ԱՄ-ն ապահովագրվել է օրենսդրությամբ սահմանված կարգով տրված ժամանակավոր գրանցման վկայականի հիման վրա, ապա Ապահովադիրը պարտավոր է ԱՄ-ի տեխնիկական անձնագիրը (գրանցման վկայականը) ստանալուց հետո ողջամիտ ժամկետներում վերջինիս պատճենը ներկայացնել Ապահովագրողին:

8.3 Ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի սկիզբը և ավարտը նշվում են Ապահովագրության պայմանագրում: Ապահովագրության պայմանագրի ժամկետի սկիզբը չի կարող լինել Ապահովագրության պայմանագրի կնքման ժամկետից շուտ:

8.4 Ապահովագրության պայմանագրի գործողությունը դադարում է՝

ա) Ապահովագրության պայմանագրում նշված ժամկետի լրանալուց հետո.

բ) Ապահովագրողի կողմից Ապահովագրության Կանոնների և դրանց հիման վրա կնքված Ապահովագրության պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները ամբողջ ծավալով կատարելուց հետո,

գ) կողմերի համաձայնությամբ.

դ) օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Ապահովագրության պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

8.5 Ապահովադիրն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Ապահովագրության պայմանագիրը՝ այդ մասին ոչ պակաս քան 15 օր առաջ ծանուցելով Ապահովագրողին:

8.6 Ապահովադրի պահանջով Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովագրողն Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Ապահովագրության պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, ինչպես նաև Ապահովադրից գանձվում է տուգանք

Ապահովագրության պայմանագրի չգործած օրերի համար հաշվարկված Ապահովագրության Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի 20%-ի չափով՝ հետևյալ բանաձևով՝ (Ապահովագրության պայմանագրով սահմանված Ապահովագրավճար * 20%)/ Ապահովագրության պայմանագրի գործողության օրեր * Ապահովագրության պայմանագրի չլրացած օրեր, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Եթե Ապահովագրության պահանջները պայմանավորված են Ապահովագրողի կողմից Ապահովագրության պայմանների և Կանոնների խախտմամբ, ապա Ապահովագրողն Ապահովագրողին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Ապահովագրության պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն:

8.7 Ապահովագրողի պահանջով Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովագրողին են վերադարձվում ապահովագրավճարներն՝ Ապահովագրության պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ եթե Ապահովագրողի պահանջները պայմանավորված են Ապահովագրողի կողմից Ապահովագրության պայմանագրի և Կանոնների խախտմամբ, ապա վերջինս Ապահովագրողին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Ապահովագրության պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, ինչպես նաև Ապահովագրողից գանձվում է տուգանք Ապահովագրության պայմանագրի չգործած օրերի համար հաշվարկված Ապահովագրության Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի 20%-ի չափով՝ հետևյալ բանաձևով՝ (Ապահովագրության պայմանագրով սահմանված Ապահովագրավճար * 20%)/ Ապահովագրության պայմանագրի գործողության օրեր * Ապահովագրության պայմանագրի չլրացած օրեր, բացառությամբ Կանոնների 6.17 և 6.19 կետերում սահմանված դեպքերում:

8.8 Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովագրողին չեն վերադարձվում ապահովագրավճարները, եթե Ապահովագրողը տվյալ Ապահովագրության պայմանագրի գծով դիմել է ապահովագրական հատուցում ստանալու համար և ապահովագրական հատուցման հայցը Ապահովագրողի կողմից դեռևս չի կարգավորվել կամ ստացել է տվյալ Ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրավճարի կեսից ավելի չափով ապահովագրական հատուցում:

8.9 Ապահովագրողի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ կարող են սահմանվել դադարեցման գծով վերադարձվող ապահովագրավճարի հաշվարկի այլ սկզբունքներ:

ԲԱԺԻՆ 9. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

9.1 Ապահովագրական հատուցումն ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովագրողի կողմից Ապահովագրության պայմանագրի հիման վրա Ապահովագրողին կամ Շահառուին վճարման ենթակա դրամական արտահայտությամբ գումարն է, որը վճարվում է ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ Ապահովագրողի և Ապահովագրողի (Շահառուի) փոխադարձ համաձայնությամբ կարող է վճարվել նաև համարժեք գույքով կամ կարող է իրականացվել վնասված ԱՄ-ի վերանորոգում, բայց ոչ ավել, քան Ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարի չափը կամ դրան համարժեք գույքը:

Եթե ապահովագրական պատահար տեղի ունենալու պահին Ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը ցածր է ԱՄ-ի ապահովագրական (իրական կամ շուկայական) արժեքից, ապա ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրողն Ապահովագրողին (Շահառուին) վճարում է ապահովագրական հատուցում՝ ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված փաստացի վնասի մի մասի չափով՝ ապահովագրական արժեքի նկատմամբ ապահովագրական գումարի համամասնությամբ՝ դրանից մասհանելով Ապահովագրության պայմանագրով նախատեսված ոչ պայմանական չհատուցվող գումարը, բացառությամբ Ապահովագրության պայմանագրով նախատեսված դեպքերի:

9.2 Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովադիրը պարտավոր է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը և տեղեկատվությունը՝

ա) գրավոր դիմում,

բ) Ապահովագրության պայմանագրի բնօրինակը կամ կրկնօրինակը (Ապահովադրի մոտ առկա տարբերակը),

գ) ֆիզիկական անձ ապահովադրի դեպքում՝ վերջինիս անձնագրի պատճենը,

դ) ԱՄ-ի նկատմամբ սեփականության (տնօրինման, տիրապետման, օգտագործման) իրավունքը հավաստող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի պատճենները՝ Ապահովագրողին ցույց տալով նաև դրանց բնօրինակները,

ե) ԱՄ-ի գրանցման փաստաթղթերի (ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագրի, ավտոտրանսպորտային միջոցի գրանցման վկայականի) պատճենները՝ Ապահովագրողին ցույց տալով նաև վերջիններիս բնօրինակները,

զ) դեպքի պահին ԱՄ-ն վարող անձի վարորդական վկայականի և անձնագրի պատճենները՝ Ապահովագրողին ցույց տալով նաև վերջիններիս բնօրինակները,

է) դեպքի պահին ԱՄ-ն վարող անձի ակոհոլի, թմրանյութերի կամ հոգեմետ նյութերի ազդեցության տակ չլինելու փաստը հավաստող համապատասխան լիազորված մարմնի կողմից տրված տեղեկանքը, բացառությամբ Ապահովագրողի ներկայացուցչի կողմից ակոհոլի, թմրանյութերի կամ հոգեմետ նյութերի ազդեցության տակ չլինելու հանգամանքը պարզելու կամ սույն ենթակետում նշված տեղեկանքը Ապահովագրողի կողմից չպահանջելու դեպքի,

ը) ԱՄ-ին պատճառված վնասի համար պատասխանատու անձի առկայության դեպքում՝ վերջինիս վավերապայմանները՝ անունը, ազգանունը, գրանցման (բնակության) հասցեն, անձնագրի տվյալները, կազմակերպության դեպքում՝ պետական ռեգիստրի կողմից տրված ընկերության գրանցման տվյալները կամ հասցեն և հեռախոսահամարը կամ տեղի ունեցած պատահարին մասնակից ավտոտրանսպորտի իրեն հայտնի տվյալները (պետհամարանիշը, ավտոմեքենայի մակնիշը, գույնը և այլն),

թ) ոստիկանության, պետավտոտեսչության, հակահրդեհային ծառայության և այլ իրավասու մարմինների կողմից տրված ապահովագրական պատահարը հավաստող փաստաթղթերը:

10.2.1 Բացի ռուսերեն լեզվից այլ օտար լեզուներով կազմված փաստաթղթերը պետք է թարգմանվեն հայերեն կամ ռուսերեն Ապահովադրի հաշվին:

10.2.2 Գործի հանգամանքների հետ կապված սույն կետում նշված փաստաթղթերի ցանկը Ապահովագրողի կողմից կարող է կրճատվել:

10.2.3 Ապահովադիրը (Շահառու, լիազորված անձը կամ վարորդը) կրում է իր կողմից Ապահովագրողին ներկայացված փաստաթղթերի և կամ դրանց պատճենների իսկության, հավաստիության և ոչ կեղծ լինելու բոլոր ռիսկերը:

10.2.4 Ապահովագրողը կարող է չպահանջել Կանոնների 9.2 կետի թ) ենթակետում նշված փաստաթղթերը, եթե հնարավորություն ունի անձամբ պարզելու պատահարի տեղի ունենալու հանգամանքները և ըստ նախնական զննության տվյալ ԱՄ-ի ապահովագրական հատուցման գումարը չի գերազանցում 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը: Եթե հետագայում պարզվի, որ հատուցման ենթակա գումարը գերազանցում է վերանշյալ գումարը, ապա հատուցման առավելագույն չափը չի կարող գերազանցել 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը:

9.3 ԱՄ-ի գողության կամ ապահովագրական այն ռիսկի դեպքում, երբ հարուցվել է քրեական գործ, Ապահովադիրը պարտավոր է բացի Կանոնների 10.2 կետում նշված փաստաթղթերից ներկայացնել նաև՝

ա) եթե 9.2 կետում նշված փաստաթղթերից որևէ մեկը կցված է ԱՄ-ի գողության փաստով հարուցված քրեական գործով նյութերին, ապա այդ հանգամանքը հաստատող փաստաթուղթը,

բ) քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենը, իսկ Կանոններով նախատեսված դեպքերում նաև քրեական գործի ավարտի վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը,

գ) լուցման բանալիների, քարտերի, ապահովագրված ավտոտրանսպորտային միջոցում տեղադրված հակաառևանգման բոլոր էլեկտրոնային և էլեկտրամեխանիկական համակարգերի ակտիվ և պասիվ ակտիվատորների (եթե այդպիսիք կան), մեխանիկական հակաառևանգման սարքերի բոլոր բանալիների լրիվ կոմպլեկտները (սույն կետով սահմանված պահանջը վերաբերում է միայն գողության դեպքին):

դ) Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողի պահանջով տրամադրել նաև այլ փաստաթղթեր, որոնք ուղղակի կապ ունեն տեղի ունեցած պատահարի հետ կամ կարևոր են վնասի պատճառների և (կամ) չափի հիմնավորման համար:

9.4 Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է Կանոնների 9.2 (բացառությամբ գրավոր դիմումի) կամ համապատասխան դեպքում 9.3 կետերում սահմանված փաստաթղթերը ներկայացնել վթարի վերաբերյալ Ապահովագրողին գրավոր դիմում ներկայացնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Այդ ժամկետում Ապահովադիրի (Շահառուի) կողմից Կանոններով սահմանված փաստաթղթերը չներկայացնելու կամ գրավոր որևէ միջնորդություն սահմանված երկու ամսյա ժամկետը երկարաձգելու մասին չներկայացնելու դեպքում, Ապահովագրողը Կանոնների համաձայն Ապահովադիրի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով մերժում է ապահովագրական հատուցման վճարումը, սույն կետում սահմանված ժամկետը լրանալուց հետո հնգօրյա ժամկետում:

Այն դեպքում, երբ Ապահովադիրը գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին, ապա Ապահովագրողը էլնելով տվյալ գործի հանգամանքներից կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև վեց ամիս ժամկետով: Նշված ժամկետում Ապահովադիրի կողմից սահմանված պարտավորության չկատարման հետևանքները նույնանում են սույն կետի երկրորդ պարբերությունում սահմանված դրույթների հետ:

9.5 Ապահովագրողն ապահովագրական պատահարի մասին Կանոնների 9.2, իսկ համապատասխան դեպքում 9.3 կետերում նշված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուն հաջորդող օրվանից հաշվված 5 օրյա ժամկետում պարտավոր է օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ընդունել ապահովագրական հատուցումը վճարելու կամ մերժելու մասին եզրակացություն (որոշում):

Եթե Ապահովադիրի կողմից ներկայացված փաստաթղթերը բավարար չեն տեղի ունեցած պատահարի պատճառները կամ վնասի չափը հիմնավորելու համար, ապա սույն կետի առաջին մասում նշված ժամկետները սկսում են հոսել վնասի պատճառների և (կամ) չափի հիմնավորման վերաբերյալ փաստաթղթերն Ապահովագրողի կողմից ձեռք բերման հաջորդ օրվանից:

Ապահովագրողն ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը պատշաճ կերպով՝ Ապահովադիրին (Շահառուին) անձամբ հանձնելու միջոցով կամ Ապահովադիրի (Շահառուի) հասցեով փոստային առաքմամբ, տրամադրում է Ապահովադիրին (Շահառուին):

Ապահովագրական հատուցման նվազեցման կամ հատուցման մերժման դեպքում Ապահովագրողի կայացրած պատճառաբանված որոշումը հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով առաքվում է Ապահովադիրին (Շահառուին)՝ նրա մշտական բնակության հասցեով կամ ուղարկվում է վերջինիս կողմից տրամադրված էլեկտրոնային հասցեին:

Հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից առավելագույնը 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը պարտավորվում է միանվագ իրականացնել ապահովագրական հատուցումը, եթե Ապահովագրողը և Ապահովադիրը (Շահառուն) ապահովագրական հատուցման վճարման այլ կարգ կամ ժամկետ չեն համաձայնեցրել:

9.6 Եթե Կանոններով սահմանված ապահովագրական ռիսկի առնչությամբ իրավասու պետական մարմինների կողմից հարուցված է քրեական գործ, ապա Ապահովագրողը ապահովագրական հատուցում վճարելու կամ այն մերժելու մասին Կանոններով և այլ իրավական ակտերով նախատեսված եզրակացությունն Ապահովադրին (Շահառուին) իրավունք ունի տրամադրել միայն քրեական գործի ավարտի կամ կասեցման վերաբերյալ Ապահովադրից (Շահառուից) համապատասխան փաստաթղթերն ստանալու օրվանից հնգօրյա ժամկետում: Գողության (առևանգման) ռիսկով Ապահովագրողն ապահովագրական հատուցման վճարումը կարող է հետաձգել ապահովագրական հատուցման վճարման մասին եզրակացությունը Ապահովադրին (Շահառուին) տրամադրելուց հետո մինչև 6 ամիս ժամկետով: Եթե այդ ժամկետի ընթացքում հայտնաբերվում է գողացված ավտոտրանսպորտը կամ հանցագործություն կատարած անձը, ապա ապահովագրական հատուցման վճարումը կարող է հետաձգվել և իրականացվել տվյալ դեպքի առնչությամբ օրինական ուժի մեջ մտած դատավճիռն Ապահովագրողի կողմից ստանալուց հետո եռօրյա ժամկետում:

9.7 Անհրաժեշտության դեպքում տեղի ունեցած պատահարի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով Ապահովագրողը կարող է դիմել պետական մարմինների, կազմակերպությունների կամ այլ անձանց, ովքեր տիրապետում են ապահովագրական պատահարի վերաբերյալ տեղեկատվությանը:

Ապահովագրողն իրավունք ունի անձամբ հետաքննելու ապահովագրական պատահարի հանգամանքները կամ ներգրավելու այլ անձանց:

9.8 Ապահովագրական պատահարի առաջացումից հետո Ապահովագրողն իրավունք ունի դիմելու անկախ փորձագետի՝ ապահովագրական դեպքի պատճառները բացահայտելու և վնասի չափը ճշտելու համար, ինչպես նաև ապահովագրական հատուցման չափը որոշելիս հիմնվելու վերջիններիս եզրակացությունների վրա:

Եթե ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած վնասը Ապահովագրողի պատվերով գնահատվում է համապատասխան մասնագիտացված կազմակերպության կամ անկախ փորձագետի կողմից, ապա դրանց հետ կապված ծախսերը կրում է Ապահովագրողը: Այդ դեպքում ապահովագրական հատուցման չափը Ապահովագրողի կողմից որոշվում է վերջիններիս կողմից տրամադրված փորձագիտական եզրակացության (որտեղ գնահատվում է վնասի մեծությունը) հիման վրա:

Ապահովագրողն իրավունք ունի նաև ինքնուրույն կերպով՝ իր համապատասխան ստորաբաժանման կամ աշխատակցի միջոցով գնահատելու պատահարի հետևանքով պատճառված վնասի չափը և դա հիմք ընդունելու ապահովագրական հատուցման չափի որոշման համար:

Պատահարի հետևանքով պատճառված վնասի չափը գնահատվում է համաձայն Ընկերության խորհրդի 03.11.2018թ. թիվ 39 որոշմամբ հաստատված «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ-ի ավտոտրանսպորտի գնահատման և փորձագիտության կանոնակարգի, որը ներկայացված է Ընկերության www.armeniainsurance.am պաշտոնական էլեկտրոնային կայքում:

9.9 Պատահարի վերաբերյալ փորձագիտական եզրակացությունը հնարավորության դեպքում կարող է կազմվել Ապահովադրի կամ նրա ներկայացուցչի մասնակցությամբ:

9.10 Ապահովադրին իրավունք ունի չհամաձայնվել Ապահովագրողի կողմից կամ Ապահովագրողի կողմից ներգրավված մասնագետների (փորձագետների) կողմից կազմված փորձագիտական եզրակացության հետ և պահանջել այլ անկախ փորձագետի կողմից փորձաքննության անցկացում: Այդ դեպքում անկախ փորձագետի վարձատրության ծախսերը կատարվում են Ապահովադրի կողմից: Ապահովագրողն իր հերթին կարող է համապատասխան հիմնավորմամբ չընդունել Ապահովադրի փորձագետի եզրակացությունը, որի հետ կապված Ապահովադրին (Շահառուն) իրավունք ունի դատական կարգով բողոքարկել Ապահովագրողի կողմից կազմված պատահարի վերաբերյալ եզրակացությունը:

9.11 Ապահովագրական հատուցումը սահմանվում է՝

9.11.1 ապահովագրված ԱՄ-ի վնասվելու դեպքում՝ փաստացի վնասի չափով, եթե ապահովագրական գումարը համապատասխանում է ապահովագրված ԱՄ-ի ապահովագրական, շուկայական արժեքին, բայց ոչ ավել, քան ապահովագրական գումարը: Ապահովագրված ԱՄ-ի ոչնչացման (անվերականգնելի վիճակում գտնվելու) դեպքում՝ ապահովագրական գումարի լրիվ չափով (100%)՝ մասհանած Ապահովագրության պայմանագրով սահմանված չհատուցվող գումարը և ավտոտրանսպորտի մնացորդային արժեքը, իսկ մասնակի Ապահովագրության դեպքում՝ մնացորդային մասերի նկատմամբ կիրառվում է նաև Ապահովագրության համամասնությունը: Ընդ որում, Ապահովադիրն (Շահառուն) իրավունք չունի հրաժարվել այդպիսի մնացորդային արժեք ունեցող մասերից:

9.11.2 Ապահովագրական հատուցում իրականացնելիս հաշվի է առնվում ցամաքային ավտոտրանսպորտի բնական մաշվածությունը: Եթե ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական արժեքն էապես տարբերվում է ապահովագրական պատահարի ի հայտ գալու պահին դրա իրական արժեքից, ապա հիմք է ընդունվում իրական արժեքը:

9.11.4 Կանոնների 9.11.1 կետով հատուցում կատարելու դեպքում՝

ա) եթե վնասված մասը կամ առարկան հնարավոր է վերականգնել վերանորոգման միջոցով, վնաս է համարվում այդ մասի (առարկայի) վերանորոգման արժեքը: Վերանորոգման գումարային մեծությունը չի կարող գերազանցել տվյալ մասի (առարկայի) արժեքը,

բ) վերանորոգման նախահաշվում ընդգրկվում են միայն այն ծախսերը, որոնք հետևանք են ապահովագրական պատահարի,

գ) վերանորոգման նախահաշվում չեն ընդգրկվում ԱՄ-ի տեխնիկական սպասարկման և երաշխիքային վերանորոգման ծախսերը:

9.12 Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրողը կհատուցի Ապահովագրության պայմանագրում նշված տարածքի սահմաններում Ապահովադիրի՝ զագաբալոնի պայթյունի արդյունքում ԱՄ-ի վնասման կամ ոչնչացման դեպքում տեղափոխումը (եվակուացիան) պատահարի վայրից մինչև մոտակա ավտոտեխսպասարկման կետը Ապահովադիրի և Ապահովագրողի փոխհամաձայնությամբ: Ընդ որում՝ Ապահովագրողի կողմից վճարվող տեղափոխման ծախսերը չեն կարող գերազանցել 25,000 ՀՀ դրամը:

ԲԱԺԻՆ 10. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10.1 Ապահովադիրն իրավունք ունի՝

ա) Ապահովագրողից պահանջել նրա պետական գրանցումը և ապահովագրական գործունեությամբ զբաղվելու թույլտվությունը (լիցենզիան) հաստատող փաստաթղթերը,

բ) ծանոթանալ Ապահովագրության պայմաններին,

գ) Ապահովագրողի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական գործակալների և բրոքերների միջոցով,

դ) ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո ստանալ ապահովագրական հատուցում,

ե) Ապահովագրության պայմանագրի կորստի դեպքում ստանալ դրա կրկնօրինակը, որից հետո կորցրած պայմանագիրը ճանաչվում է անվավեր և նրա հիման վրա հատուցումներ չեն կատարվում: Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում, Ապահովագրության պայմանագրի կրկնօրինակի կորստի դեպքում, Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադիրից գանձել պայմանագրի պատրաստման համար կատարված ծախսին համարժեք գումար

զ) Ապահովագրության պայմանագրով սահմանված Լիազորված տիրապետողների ցանկում կատարել փոփոխություններ:

10.2 Ապահովադիրը պարտավոր է՝

ա) Ապահովագրության պայմանագրում նշված ժամկետներում վճարել ապահովագրավճարները,

բ) Ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ Ապահովագրողին գրավոր տեղեկություններ հայտնել ապահովագրական պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների երևան գալու՝ իրեն հայտնի հավանականության մասին, ինչպես նաև տվյալ ապահովագրության օբյեկտի գծով կնքված և կնքվող բոլոր ապահովագրության պայմանագրերի մասին՝ ապահովագրության դիմում-հարցաթերթիկում նշելով ռիսկերը, ապահովագրական գումարները, ապահովագրության պայմանագրերի համարները և դրանց գործողության ժամկետները,

գ) Ապահովագրության պայմանագրի կնքումից առաջ ապահովել ԱՄ-ի գննության և լուսանկարման գործընթացը, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ,

դ) ռիսկի վերագնահատման համար նշանակություն ունեցող նոր հանգամանքների առաջ գալու դեպքում՝ դրանց մասին անմիջապես հայտնել Ապահովագրողին,

ե) պահպանել օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված, Ապահովագրության օբյեկտին առնչվող համապատասխան անվտանգության նորմերը և կանոնները,

զ) Ապահովագրության պայմանագրով և Կանոններով սահմանված ժամկետում Ապահովագրողին հայտնել ապահովագրական պատահարի առաջացման մասին, ինչպես նաև ներկայացնել ապահովագրական դեպքի պատճառների և հանգամանքների վերաբերյալ իրեն հայտնի բոլոր տեղեկությունները,

է) ապահովագրական պատահարների առաջացման դեպքում ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումներ՝ վնասները կանխելու կամ նվազեցնելու նպատակով,

ը) Ապահովագրողին հնարավորություն տալ գննել և ուսումնասիրել պատահարի հետևանքով վնասված ԱՄ-ի, փորձաքննություն կատարել վնասի առաջացման պատճառների և հետևանքների բացահայտման ուղղությամբ,

թ) հաղորդել Ապահովագրողին ապահովագրական պատահարի հետ կապված իրավասու մարմինների գործողությունների մասին (հետաքննություն, դատական կանչ և այլն),

ժ) առանց Ապահովագրողի գրավոր համաձայնության չտալ խոստումներ և չանել առաջարկություններ կորստի կամ վնասի կամավոր հատուցման վերաբերյալ,

ժա) տեղի ունեցած պատահարից հետո անհապաղ, ցանկացած մատչելի և տեղեկացման փաստը հավաստող եղանակով տեղեկացնել Ապահովագրողի ներկայացուցիչներին Ապահովագրության պայմանագրում նշված հեռախոսահամարներով՝ հնարավորություն տալով Ապահովագրողի ներկայացուցչին դեպքի վայրում գննելու տեղի ունեցած վթարը, իսկ բոլոր դեպքերում պատահարը տեղի ունենալուց հետո ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում, չհաշված ոչ աշխատանքային օրերը, այդ մասին գրավոր հայտնել Ապահովագրողին:

ժբ) տեղի ունեցած պատահարի մասին Ապահովագրողին հայտնել հնարավորինս ամբողջական տեղեկատվություն, որը հայտնի է իրեն ծանուցելու պահի դրությամբ (ամսաթիվը, ժամը և վայրը, պատահարի առաջացման հանգամանքները և այլն)

ժգ) պատահարի վայրում սպասել Ապահովագրողի ներկայացուցչին (եթե Ապահովագրողն Ապահովադրին տեղեկացրել է, որ իր ներկայացուցիչը ժամանելու է դեպքի վայր) և կատարել նրա ցուցումները,

ժդ) Ապահովագրողի կողմից նշված ժամկետներում Ապահովագրողին և/կամ անկախ փորձագետին տրամադրել ապահովագրված ԱՄ-ի գնումն իրականացնելու հնարավորություն՝ վնասի չափը որոշելու նպատակով,

ժե) պահպանել վնասված ԱՄ-ն այն վիճակում, որում այն հայտնվել էր պատահարից հետո՝ նախքան Ապահովագրողի և/կամ անկախ փորձագետի կողմից դրա գնումը:

ժգ) նշել պատահարում ներգրավված այլ ԱՄ-ի պետհամարանիշը, պարզել պատահարում ներգրավված այլ կողմերի և վկաների անունները, հասցեները և անձը հաստատող փաստաթղթերի համարները (հնարավորության դեպքում),

ժե) չտեղաշարժել ԱՄ-ն կամ պատահարի հետ կապ ունեցող առարկաները, և/կամ չլքել պատահարի վայրը մինչև Ոստիկանության աշխատակիցների և Ապահովագրողի ներկայացուցչի ժամանումը (եթե Ապահովագրողն Ապահովադիրին տեղեկացրել է, որ իր ներկայացուցիչը ժամանելու է դեպքի վայր) և պատահարի փաստով բոլոր անհրաժեշտ տեղեկատվության արձանագրումը,

ժը) Հայտի կամ հնարավոր հայտի դեպքում, Ապահովադիրը և/կամ Լիազորված վարորդը, որը հատուցման պահանջ է ներկայացնում, չպետք է ընդունի որևէ պատասխանատվություն կամ չպետք է հանդես գա որևէ առաջարկով, խոստումով կամ կատարի որևէ վճարում կամ իրավական ծախսեր առանց Ապահովագրողի հետ համաձայնեցնելու:

ժթ) ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում այդ մասին հայտնել օրենսդրությամբ սահմանված իրավասու մարմիններին, որոնք իրավասու են անցկացնել պատահար տեղի ունենալու հանգամանքների ուսումնասիրություն և հետաքննություն:

11.2.1. Ապահովադիրը (ԱՄ-ն վարելու համար Ապահովադիրի կողմից լիազորված անձը) Կանոններով նշված ցանկացած վթարի դեպքում իրավունք չունի ինքնակամ լքել պատահարի վայրը և պարտավոր է ներկա գտնվել պատահարի գրանցման բոլոր գործընթացներին՝ կատարելով լիազորված պետական իրավասու մարմինների և Ապահովագրողի պատահարի հետ կապված պահանջները և ցուցումները: Ապահովադիրը (Ապահովադիրի լիազորված անձը, Շահառուն) պարտավոր է նաև պատահարը տեղի ունենալուց հետո առանց Ապահովագրողի համաձայնության չսկսել ավտոտրանսպորտի վերանորոգման աշխատանքներ, բացառությամբ այն դեպքերի, երբ վերջինս պայմանավորված է վարորդի կամ ուղևորների անվտանգության ապահովման կամ այն անհրաժեշտ է իրավասու պետական մարմինների ցուցումով և հրահանգով:

10.2.2. Եթե Ապահովադիրը սահմանված պայմանների պահպանմամբ ԱՄ-ն հանձնել է վարելու այլ անձի, ապա Ապահովադիրը պարտավոր է վերջինիս տեղեկացնել ապահովագրական պատահար լինելու դեպքում վերը նշված պարտավորությունների կատարման անհրաժեշտության և դրանց պարտադիր լինելու մասին:

10.3 Այն դեպքում, երբ Ապահովագրողին հայտնի չի դառնում պատահարի հետ կապված իրեն անհրաժեշտ հանգամանքներն ամբողջությամբ, որոնք հնարավորություն կտային համապատասխան որոշում ընդունել ապահովագրական հատուցման հարցի վերջնական կարգավորման վերաբերյալ, և միաժամանակ Ապահովադիրի կողմից Կանոնների 10.2 կետի ա)-ից ժթ) ենթակետերում, 10.2.1 և 11.2.2 կետերում նշված պարտավորությունները սահմանված կարգով կամ ժամկետներում չեն կատարվել, ապա Ապահովագրողը միանշանակ հրաժարվում է ապահովագրական հատուցում իրականացնելուց:

10.4 Եթե Ապահովադիրն Ապահովագրողին չի հայտնել ապահովագրական պատահարի մասին Կանոնների 10.2 կետի ժ) ենթակետում նշված կարգով և (կամ) ժամկետներում, ապա Ապահովագրողը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1017 հոդվածի 2-րդ մասի համաձայն իրավունք ունի չվճարելու ապահովագրական հատուցումը, եթե չապացուցվի, որ Ապահովագրողը ժամանակին իմացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին կամ, որ այդ մասին Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա: Եթե Ապահովագրության պայմանագրով նախատեսված է Շահառու (Շահառուներ) և լիազորված վարորդ (վարորդներ), ապա սույն կետով սահմանված պարտավորությունները կրում է նաև Շահառուն (Շահառուները) և լիազորված վարորդը (վարորդները), որոնց Ապահովադիրը պարտավոր է տեղեկացնել նման պարտավորությունների պարտադիր կատարման անհրաժեշտության մասին:

Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցում իրականացնելուց հետո Ապահովադիրը ԱՄ-ի վերանորոգումից հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է ԱՄ-ն ներկայացնել

Ապահովագրողի զննմանը: Ապահովադրի կողմից ԱՄ-ն զննման չներկայացնելու դեպքում Ապահովագրողը ազատվում է հաջորդ անգամ տվյալ ԱՄ-ին պատճառված վնասը հատուցելուց:

10.5 Եթե գողացված ապահովագրված ԱՄ-ն և/կամ լրացուցիչ սարքավորումը հայտնաբերվել կամ վերադարձվել են Ապահովադրին կամ հայտնի է դարձել նախկինում որպես գողացված հայտարարված ապահովագրված ԱՄ-ի գտնվելու վայրը, անմիջապես տեղեկացնել այդ մասին Ապահովագրողին, իսկ 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում հետ վերադարձնել Ապահովագրողի կողմից վճարված ապահովագրական հատուցումը: Ապահովագրողը կարող է երկարաձգել 30 (երեսուն) օրյա ժամկետը:

10.6 Ապահովադրի կողմից Կանոնների 10.2 կետի ժթ) ենթակետում նշված պարտավորությունները չկատարելու դեպքում Ապահովագրողն ապահովագրական հատուցում չի իրականացնում, բացառությամբ այն դեպքի, երբ Ապահովագրողի ներկայացուցիչը Ապահովադրին կամ ավտոմեքենան վարելու համար Ապահովադրի կողմից լիազորված անձին ազատել է 10.2 կետի ժթ) ենթակետում նշված պարտականությունները կատարելուց՝ վերջինիս տրամադրելով համապատասխան փաստաթուղթ:

10.7 **Ապահովագրողն իրավունք ունի՝**

ա) Ապահովադրի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական բրոքերների և գործակալների միջոցով,

բ) վերաապահովագրել իր ստանձնած ապահովագրական ռիսկը ինչպես Հայաստանի Հանրապետության տարածքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս,

գ) ուսումնասիրել Ապահովագրության օբյեկտը և անհրաժեշտության դեպքում հարցումներ կատարել համապատասխան իրավասու մարմիններին,

դ) Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում ստուգել ապահովագրված նյութական արժեքների պահպանման վիճակը և թերությունների հայտնաբերման դեպքում պահանջել դրանց վերացումը՝ սահմանելով հիմնավոր ժամկետներ,

ե) միակողմանի վաղաժամկետ լուծել Ապահովագրության պայմանագիրը Ապահովադրի կողմից՝ օրենսդրությամբ կամ Ապահովագրության պայմանագրով նախատեսված իր պարտականությունները չկատարելու դեպքում,

զ) պահանջել վճարված հատուցման վերադարձ, եթե ապահովագրական հատուցման վճարումից հետո ի հայտ են գալիս ապահովագրական հատուցման վճարումը մերժելու Կանոններով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքեր:

10.8 **Ապահովագրողը պարտավոր է՝**

ա) Ապահովադրին ծանոթացնել Ապահովագրության պայմաններին, Ապահովադրի պահանջով ցույց տալ պետական գրանցումը և ապահովագրական գործունեությամբ զբաղվելու թույլտվությունը (լիցենզիան) հավաստող փաստաթղթերը,

բ) Ապահովադրի պահանջով և օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով փոփոխություններ կատարել Ապահովագրության պայմանագրում, եթե նրա գործունեության ընթացքում տեղի է ունեցել ապահովագրական ռիսկի փոփոխություն,

գ) ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովադրի կողմից անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվելուց հետո պարզել նրանց իսկությունը և կատարել ապահովագրական հատուցում կամ մերժել այն,

դ) չիրապարակել Ապահովադրի բանկային, ապահովագրական, առևտրային կամ այլ գաղտնիք պարունակող տեղեկությունները:

10.9 Ապահովադրին ու Ապահովագրողն ունեն օրենքով, Կանոններով և Ապահովագրության պայմանագրով սահմանված այլ իրավունքներ ու պարտականություններ:

ԲԱԺԻՆ 11. ՎՆԱՍԻ ՀՍՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՁԻ ԻՐԱՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԱՆՑՆԵԼԸ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)

11.1 Ապահովադրի (Շահառուի) պահանջի իրավունքը, որը նա ունի վնաս պատճառելու համար պատասխանատու անձի նկատմամբ, անցնում է ապահովագրական հատուցումն իրականացրած Ապահովագրողին՝ վերջինիս կողմից վճարված գումարի սահմաններում:

11.2 Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է հնարավորության դեպքում, վնաս պատճառելու համար պատասխանատու անձանց ներկայացնել պատշաճ կերպով ձևակերպված պահանջ և Ապահովագրողին փոխանցել մեղավոր անձանց նկատմամբ պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

11.3 Եթե Ապահովադիրը (Շահառուն) հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ իր պահանջի իրավունքից կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովադրի (Շահառուի) մեղքով, Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջելու ապահովագրական հատուցման ավել վճարված գումարի վերադարձ:

ԲԱԺԻՆ 12. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

12.1 Կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում Ապահովագրության պայմանագրից բխող պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար, եթե դա հանդիսացել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք, մասնավորապես՝ ջրհեղեղի, հրդեհի, երկրաշարժի և այլ տարերային աղետների, ռազմական գործողությունների, քաղաքացիական պատերազմի, ցանկացած տիպի ժողովրդական հուզումների, գործադուլների, տնտեսական շրջափակման, ինչպես նաև կառավարության կողմից սահմանված այլ սահմանափակումների և արգելքների:

12.2 Այն դեպքում, երբ 12.1 կետում նշված հանգամանքներից մեկն անմիջականորեն ազդել է պարտականությունը Ապահովագրության պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու վրա, դրա կատարումը հետաձգվում է այդ հանգամանքների ազդեցության ժամկետով: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 30 (երեսուն) օրից ավելի, կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն լուծել Ապահովագրության պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին, և այդ դեպքում կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում հնարավոր վնասների փոխհատուցման համար:

12.3 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը Ապահովագրության պայմանագրից բխող պարտականությունների կատարման վրա պարտավոր է ապացուցել այն կողմը, որի պարտականությունների կատարմանը խոչընդոտում է նման ազդեցությունը:

ԲԱԺԻՆ 13. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

13.1 Կանոնների և նրա թարգմանությունների տարընթերցման դեպքում նախապատվությունը տրվում է Կանոնների հայերեն տարբերակին:

13.2 Վիճելի հարցերի լուծման ժամանակ Ապահովագրության պայմանագրի դրույթները գերակա են Կանոնների դրույթների նկատմամբ:

13.3 Ապահովագրության պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Այդպիսի համաձայնության ձևը չբերման դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից՝ “Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին” ՀՀ օրենքի համաձայն կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն ՀՀ դատարաններում: